ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 սեպտեմբերի 2024 թվականի N 1416-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-Ի N 307-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 24-ի «Տրակտորիստ-մեքենավարների գիտելիքների ստուգման և վարման իրավունքի վկայականների տրամադրման կարգը հաստատելու մասին» N 307-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) հավելվածի 2-րդ կետում՝

ա. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի (այսուհետ՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ)» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի կողմից» բառերով,

բ. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից (այսուհետ՝ ճանապարհային ոստիկանություն)» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունից (այսուհետ՝ նախարարություն)» բառերով.

2) հավելվածի 3-րդ և 12-րդ կետերում «Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ» բառերն ու դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարար» բառերով ու դրանց համապատասխան հոլովաձևերով.

3) հավելվածի 5-րդ կետում «ճանապարհային ոստիկանության պետական ճանապարհային ոստիկանության ծառայողին (այսուհետ՝ ճանապարհային ոստիկանության ծառայող)» բառերը փոխարինել «Նախարարության աշխատողին» բառերով.

4) հավելվածի 19-րդ կետում «ճանապարհային ոստիկանության պետին» բառերը փոխարինել «Նախարարության համապատասխան ստորաբաժանման ղեկավարին» բառերով.

5) հավելվածի ողջ տեքստում՝

ա. «ճանապարհային ոստիկանություն» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «Նախարարություն» բառով և դրան համապատասխան հոլովաձևերով,

բ. «ծառայող» բառը և դրան համապատասխան հոլովաձևը փոխարինել «աշխատող» բառով և դրան համապատասխան հոլովաձևով.

6) N 2 ձևում «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

05.09.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ